ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 37-L «06» հունիսի 2021

## 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ 2-ՐԴ, 5-ՐԴ, 7-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման հավելված 2-ի 9-րդ գլխի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի օգոստոսի 4-ի N 36-L հրամանը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման փորձնական կարգը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրվանից:

**Նախարար՝** **ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ**

8/6/2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

**Հավելված**
**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի**
**2021 թվականի օգոստոսի 06 -ի N 37-Լ հրամանի**

# ԿԱՐԳ

## 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ 2-ՐԴ, 5-ՐԴ, 7-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

### Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն) 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների ու ծրագրերի փորձարկման գործընթացում սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման (այսուհետ՝ գնահատում) հետ կապված հարաբերությունները:
2. Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև՝ ըստ դիրքորոշումների ու արժեքների ձևավորման:

3. Գնահատումը միտված է սովորողի ուսումնական գործունեության խթանմանը, ակտիվացմանը, շարունակաբար զարգացմանը և կրթության որակի վերահսկմանը:
4. Գնահատման գործընթացի հիմքում ընկած են հավաստիության, հուսալիության, հիմնավորվածության, մատչելիության, արդարության և թափանցիկության սկզբունքները:

## II. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

5. Հանրակրթական ծրագրեր իրականացնող Հաստատության սովորողի գնահատումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում՝ ընթացիկ գնահատման, կիսամյակային, տարեկան ամփոփիչ գնահատումների և հանրակրթական ծրագրի յուրաքանչյուր աստիճանի ավարտին՝ ամփոփիչ ատեստավորման եղանակով:
6. Ընթացիկ գնահատումն իրականացվում է ոչ միավորային (բնութագրող), ձևավորող (ուսուցանող) և քանակական (միավորային)՝ (այսուհետ՝ միավորային) ձևերով: Հաստատության մանկավարժական խորհուրդը հաստատում է միավորային գնահատման հաճախությունը՝ ըստ ուսումնական առարկաների (դասընթացների), ինչպես նաև ձևավորող գնահատման մեթոդները, տեսակները, և գործիքները:

## III. ՈՉ ՄԻԱՎՈՐԱՅԻՆ (ԲՆՈՒԹԱԳՐՈՂ) ԳՆԱՀԱՏՈՒՄ

7. Ոչ միավորային գնահատման նպատակը սովորողների մոտ օբյեկտիվ ինքնագնահատման, ինքնուրույն սովորելու կարողությունների ձևավորումն է, ինչպես նաև ուսումնառության արդյունքների ամրագրումն ու վերահսկումը՝ բնութագրման միջոցով: Ոչ միավորային գնահատումը կիրառվում է սովորողի ուսումնական առաջընթացը և վերջնարդյունքների յուրացման աստիճանը նկարագրելիս:
8. 1-4-րդ դասարաններում կիրառվում է միայն ոչ միավորային գնահատում: Ոչ միավորային գնահատման ժամանակ թվային նիշը փոխարինող որևէ այլ նշան չի կիրառվում, կիրառվում է միայն բնութագրող բացատրական գնահատում:

9. Ոչ միավորային գնահատման խնդիրներն են.

1) սովորողի անհատականությանը միտված փոխգործակցության ապահովումը ուսուցչի և սովորողի միջև,

2) սովորողների անհատական կարողությունները հաշվի առնելը,

3) սովորողների շրջանում կրթական-ճանաչողական մոտիվացիայի ձևավորումը:

10. Ոչ միավորային գնահատման հիմնական սկզբունքներն են.

1) բովանդակային վերահսկողությունը և գնահատումը հիմնված են սովորողների հետ համատեղ մշակված, հստակ, միանշանակ և պարզ չափանիշների վրա,

2) սովորողների ինքնագնահատումն ունի առաջնահերթ նշանակություն, որի արդյունքում սովորողների մոտ ձևավորվում է սեփական ուսումնական գործունեության արդյունքներն ինքնուրույն գնահատելու ունակություն (սովորողների ինքնագնահատումը պետք է նախորդի ուսուցչի կողմից գնահատմանը),

3) գնահատման շարունակականություն, որի պարագայում հաշվի առնելով ուսուցման գործընթացի շարունակականությունը՝ գնահատման՝ որպես ուսուցման միայն վերջնական արդյունքն ամրագրող գործիքից անցում է կատարվում գնահատման՝ դեպի այդ արդյունքը տանող գործընթացը գնահատելու գործիքի: Այս դեպքում սովորողը սխալվելու իրավունք է ստանում, որի շտկման գործընթացը համարվում է առաջընթաց ուսման մեջ,

4) գնահատման գործիքների ճկունություն և բազմազանություն. Ուսումնական գործընթացում կիրառվում են գնահատման տարբեր գործիքներ, ինչը թույլ է տալիս ճկուն արձագանքել սովորողների ուսումնական առաջընթացին կամ հետընթացին,

5) Վերահսկողության և գնահատման գործընթացի բնականություն. դրանք իրականացվում են սովորողների համար բնական միջավայրում- ուսուցման պրոցեսում, ինչը նվազեցնում է սովորողների լարվածությունը:

11. Ոչ միավորային գնահատման ենթակա չեն սովորողների անձնական հատկությունները, մտավոր գործընթացների ինքնատիպությունը (հիշողություն, ուշադրություն, ընկալում, գործունեության տեմպ և այլ առանձնահատկություններ):

12. Ոչ միավորային գնահատման ենթակա են սովորողների անհատական ուսումնական նվաճումները (սովորողների ներկայիս նվաճումների համեմատությունը նրա նախկին նվաճումների հետ):

13. Դրական են գնահատվում սովորողի յուրաքանչյուր հաջող քայլ, ինքնուրույնաբար հարցի պատասխանը գտնելու յուրաքանչյուր (նույնիսկ անհաջող) փորձ: Խրախուսվում է նախաձեռնողականության դրսևորումը, հարցին պատասխանելը, գրատախտակի մոտ աշխատելու ցանկությունը և ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցության այլ դրսևորումները:

14. Սովորողների ուսումնական նվաճումների գնահատման առանձնահատկություններն են.

1) գնահատվում է ոչ միայն արդյունքը, այլև սովորողի գործունեությունը,

2) գնահատվում են սովորողի անհատական ձեռքբերումները, ոչ թե այն, ինչ սովորողը չի արել, չի սովորել, չի հիշել,

3) հաշվի առնելով ուսումնական նյութի առանձնահատկությունները՝ տարբեր առարկաների գնահատման ձևերը կարող են տարբերվել:

15. Ոչ միավորային գնահատման ընթացքում ուսուցիչը արձանագրում է.

1) Սովորողի կողմից կրթական տեղեկատվության ընկալման և մշակման արագությունը (արագություն),

2) առարկայական հմտությունների յուրացումը (թեթևություն),
տեղեկատվության հիշումը (կայունություն),

3) աշխատանքի կատարման մանրակրկիտությունը (ճշգրտություն, բարեխղճություն),

4) սովորողի ուսումնական մոտիվացիան (ցանկություն, կամավորություն, ակտիվություն),

5) գործողությունների կարգավորումը (անկախություն, կայունություն),

6) սովորողների ընդգրկվածությունը սեփական ուսումնական հնարավորությունների գնահատման մեջ (ինքնագնահատում):

16. Ընթացիկ ամփոփիչ, կիսամյակային ամփոփիչ և տարեկան ամփոփիչ աշխատանքների գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր առարկայի համար կազմված ամփոփիչ բնութագրման թերթիկի միջոցով: Սովորողի ուսումնական ձեռքբերումների ամփոփիչ

բնութագրման թերթիկում ուսուցիչը գրանցում է տվյալ առարկայից սովորողի ուսումնական առաջադիմության արդյունքները:

17. Սովորողի ուսումնական աճի բնութագիրը ներառում է նրա ուսումնական գործունեության արդյունքները՝ տվյալ դասարանի առարկայացանկում ընդգրկված ուսումնական բոլոր առարկաներից: Առաջադիմությունն արձանագրելու համար հիմք են հանդիսանում դասարանի ուսումնական առարկաների չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքները:

18. Ուսուցիչն ընտրում է թեմայի վերջնարդյունքները, որի վերաբերյալ սովորողի առաջընթացը ցանկանում է որոշել և վերջնարդյունքի ցուցիչներից ընտրում է սովորողի առաջընթացը ամենից լավ բնութագրող ցուցիչները: Սովորողի առաջընթացի վերլուծության արդյունքում ուսուցիչը որոշում է առաջընթացի բարելավման ուղենիշները: Ուղենիշներին համապատասխան ուսուցիչը որոշում է դրանց իրականացմանն ուղղված գործողությունները:

19. Ուսումնական առարկայից սովորողի առաջընթացը նկարագրող թերթիկը լրացվում է էլեկտրոնային եղանակով:

| | | | |
|---|---|---|---|
| Ուսումնական տարի_____,<br>Դասարան_____, Առարկա/թեմա_____<br>Ուսուցիչ՝ _____<br>Սովորող՝ _____ | | | |
| Վերջնարդյունք | Առաջընթացը | Բարելավման ուղենիշներ | Առաջարկվող գործողություններ |
| | | | |
| | | | |

20. Յուրաքանչյուր սովորողի համար ստեղծվում է սովորողի ձեռքբերումների թղթապանակ, որի մեջ պարտադիր ներառվում են սովորողի ամփոփիչ գնահատումների արդյունքները, ինչպես նաև սովորողի կողմից ընտրված ընթացիկ գնահատման արդյունքները:

21. Սովորողի ուսումնական ձեռքբերումների տարեկան ամփոփիչ բնութագրի լրացված օրինակը կցվում է աշակերտի անձնական գործին:

## IV. ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

22. Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացի բաղադրիչ է, որը պարբերաբար իրականացվում է ուսուցչի կողմից ուսումնական գործընթացի ամբողջ ընթացքում և ուղղված է սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման մակարդակի, առկա դժվարությունների բացահայտմանը և որի ընթացքում արձանագրված տեղեկությունները օգտագործվում են ուսուցիչների և սովորողների կողմից ուսուցման և ուսումնառության գործընթացը բարելավելու համար:

23. Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

24. Ձևավորող գնահատման խնդիրներն են.

1) ուսուցման նպատակների և գնահատման չափանիշների սահմանումը և ներկայացումը սովորողներին,

2) արդյունավետ համագործակցային ուսուցման համար միջավայրի ստեղծումը,

3) սովորողների զարգացմանը նպաստող կառուցողական հետադարձ կապի ապահովումը,

4) սովորողներիր կողմից ինքնագնահատման և ինքնավերլուծության որակների ձեռքբերումը:

25. Ձևավորող գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է ուսուցիչը և ներկայացնում ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդին՝ ուսումնական տարվա սկզբին:

26. Ձևավորող գնահատման մեթոդներն ու ձևաչափը ընտրվում են ուսուցման նպատակի և առարկայի ծրագրի յուրաքանչյուր բաժնի կամ թեմայի համար ակնկալվող արդյունքների համեմատ: Ձևավորող գնահատման գործընթացում ներառվում են առարկայի ծրագրի բոլոր վերջնարդյունքները:

27. Ուսուցիչը նախագծում կամ ընտրում է ձևավորող գնահատման մեթոդները՝ հաշվի առնելով սովորողների անհատական առանձնահատկություններն ու ուսուցման բովանդակությունը:

28. Յուրաքանչյուր առաջադրանքի համար սահմանվում են նկարագրիչներ: Նկարագրիչները պետք է լինեն հստակ և ճշգրիտ, որպեսզի ուսուցչի որոշումը ձևավորող գնահատման ընթացքում լինի օբյեկտիվ: Նկարագրիչների հիման վրա որոշվում է, թե առաջադրանքի կատարման որ փուլում սովորողը ինչ դժվարություններ ունի, ինչի հիման վրա էլ ապահովվում է կառուցողական հետադարձ կապը:

29. Ձևավորող գնահատում իրականացնելու համար ուսուցիչը իրականացնում է.

1) ձևավորող գնահատման պլանավորում,

2) ձևավորող գնահատման մեթոդների ընտրություն,

3) ձևավորող գնահատման կազմակերպում և իրականացում,

4) ձևավորող գնահատման արդյունքների վերլուծություն,

5) հետադարձ կապի ապահովում և տրամադրում

30. Ձևավորող գնահատման պլանավորման և կազմակերպման համար ուսուցիչը պետք է.

1) կազմի ձևավորող գնահատման կիրառման գործընթացը արտացոլող դասի ծրագիրը,

2) բարելավի ձևավորող գնահատման համար օգտագործվող մեթոդների որակը և ավելացնի դրանց քանակը,

3) օգտագործի հետադարձ կապի տրամադրման արդյունավետ ձևեր,

4) իրականացնի դասերի վերլուծություն (սովորողների աշխատանքի որակ, գնահատման գործիքների որակ, սովորողների, գործընկերների հետ հետադարձ կապ, զրույցներ ծնողների հետ, այլ) ինքնավերլուծության և մանկավարժական գործունեության կատարելագործման համար:

31. Ձևավորող գործընթացը կազմված է գնահատման գործընթացի երեք բաղադրիչներից՝ գնահատում ուսուցչի կողմից, ինքնագնահատում և սովորողների փոխադարձ գնահատում:

32. Սովորողների ինքնագնահատման ընթացքում խրախուսվում են սովորողների ինքնակարգավորման և ինքնուրույն ուսուցման կարողությունները՝ օբյեկտիվության հիմքի վրա:

Ինքնագնահատման գործընթացի օբյեկտիվությունն ապահովելու նպատակով ուսուցիչը կարող է օգտագործել այդ գործընթացի տարբեր նպատակներին ծառայող հուշող հետևյալ հարցերը.

1) վերլուծել սովորողի կողմից սեփական ուսումնառությունը. «Որո՞նք են քո ուսումնառության ուժեղ և թույլ կողմերը», «Ինչպե՞ս ես ինքդ գնահատում քո արդյունքները, ձեռքբերումները, առաջընթացը»:

2) Պատասխանատվություն կրել սեփական ուսումնառության համար. «Բավարար ջանքեր գործադրու՞մ ես քո ուսուցման ընթացքում», «Ի՞նչ ես արել, որպեսզի հասնես սպասվող կամ ցանկալի արդյունքների», «Ի՞նչ ես կարծում, քո գնահատականը արդա՞ր է»:

3) Բացահայտել սեփական բացթողումները. «Բոլո՞ր առաջադրանքներն ես արդյոք կատարել», «Եթե ոչ, ինչու՞», «Ի՞նչն էր ամենադժվարը առաջադրանքների կատարման ընթացքում», «Ի՞նչ գիտելիք կամ հմտություն չբավականացրեց առաջադրանքը կատարելու համար»:

4) Սահմանել ապագա ուսումնառության նպատակները. «Ի՞նչ կանեիր դու աշխատանքի բարելավման համար», «Ի՞նչ պետք է անես սպասվող կամ ցանկալի արդյունքներին հասնելու համար»:

5) Հետևել սեփական ուսումնառության արդյունքների փոփոխություններին. «Ի՞նչ գիտես հիմա, որ չգիտեիր նախքան այս թեման ուսումնասիրելը»:

33. Ձևավորող գնահատման մեթոդները կարող են օգտագործվել անհատական, զույգերով և խմբային աշխատանքների կազմակերպման ընթացքում:

34. Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել թեստեր, բանավոր հարցումներ, գործնական (լաբորատոր) աշխատանքներ, տնային աշխատանքներ, քննարկումներ, փոխադարձ գնահատումներ, ինքնագնահատումներ և այլն: Դրանց կիրառման ռազմավարությունը և մեթոդները ընտրում է ուսուցիչը:

35. Ձևավորող գնահատման ժամանակ օգտագործվում են սովորողի առաջընթացը նկարագրող բնութագրեր, վերլուծություններ և մեկնաբանություններ: Ձևավորող գնահատման արդյունքում միավոր չի տրվում:

36. Ձևավորող գնահատման արդյունքում ապահովվում է սովորողների հետ հետադարձ կապը, որն օգտագործվում է ուսումնական գործընթացի տարբեր փուլերում և ուսուցչին

հնարավորություն է ընձեռում ապահովել անդադար փոխազդեցություն սովորողի հետ, ինչի արդյունքում իրականացվում է ուսուցման գործընացի ճշգրտում և հետագա պլանավորում:

37. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի գիտելիքների ձևավորող գնահատումն իրականացվում է անհատական ուսուցման պլանին համապատասխան:

## V. ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

38. Միավորային գնահատումը իրականացվում է ուսումնառության ընթացքում սովորողների կողմից առարկայական չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքների յուրացման աստիճանը որոշելու նպատակով:

39. Միավորային գնահատումը կիրառվում է սկսած 5-րդ դասարանից:

40. Սովորողների կրթական գործունեության արդյունքների գնահատման քանակական ցուցիչը գնահատականն է: Գնահատականը գնահատման գործընթացի նիշային արտահայտությունն է միավորներով:

41. Սովորողների՝ ուսումնառության ընթացքում ձեռք բերված արդյունքները գնահատվում են 10-միավորային սանդղակի միավորներով՝ 1 (մեկ), 2 (երկու), 3 (երեք), 4 (չորս), 5 (հինգ), 6 (վեց), 7 (յոթ), 8 (ութ), 9 (ինը), 10 (տասը), որտեղ որևէ նիշ չի հանդիսանում անբավարար գնահատական:

42. Գնահատման անհնարինության դեպքում (բացակա լինել, պատասխանելուց հրաժարվել, գրավոր աշխատանքը չկատարել) գնահատման արձանագրումը կատարվում է «բ» տառով:

43. Սովորողների ուսումնառության արդյունքները գնահատելու համար առանձնացվում է ուսումնական նյութի յուրացման հինգ մակարդակ.

1) առաջին մակարդակ. հասկացությունների (ուսումնասիրության օբյեկտների) ճանաչման և տարբերակման գործողություններ,

2) երկրորդ մակարդակ. ծրագրային ուսումնական նյութի հիշողության մակարդակով վերարտադրման գործողություններ,

3) երրորդ մակարդակ. հասկացման մակարդակում ծրագրային ուսումնական նյութի վերարտադրման գործողություններ, ուսումնասիրության օբյեկտների հետ գործողությունների նկարագրություն և կատարում ըստ տրված օրինակների,

4) չորրորդ մակարդակ. ծանոթ իրավիճակում գիտելիքներ կիրառելու գործողություններ՝ ըստ հայտնի մոդելների, ծրագրային ուսումնական նյութի էության բացատրություն, հստակ սահմանված կանոններով գործողությունների և վերլուծության կատարում, ուսումնական նոր խնդրի լուծման համար ընդհանրացված ալգորիթմի վրա հիմնված գիտելիքների կիրառում՝ ըստ յուրացված ալգորիթմերի,

5) հինգերորդ մակարդակ. ծրագրային նյութի անթերի իմացություն և կիրառում, անծանոթ, ոչ ստանդարտ իրավիճակներում որակապես նոր խնդիրներ լուծելու համար գիտելիքներ կիրառելու գործողություններ, ուսումնասիրության օբյեկտները նկարագրելու, բացատրելու, վերլուծելու, համադրելու և փոխակերպելու ինքնուրույն գործողություններ:

44. Յուրաքանչյուր մակարդակ գնահատվում է երկուական միավորով: Մակարդակները գնահատվում են աճման կարգով՝ 1-ից 10 միավորով՝ ըստ սովորողների գնահատման 10 միավորային սանդղակի:

45. Տրված սանդղակով սահմանված գնահատման միավորների բնութագրիչները ընդհանրական են, որոնք առավել հստակեցվում և կոնկրետացվում են ըստ առանձին ուսումնական առարկաների և ըստ գնահատման տարբեր ձևերի:

| Հաջողությունների մակարդակ | Միավոր | Բնութագրիչներ |
|---|---|---|
| Առաջին | 1 | Ճանաչում է ուսումնական նյութի որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ և գործողություններ: |

| | | |
|---|---|---|
| | 2 | Ճանաչում և տարբերակում է ուսումնական նյութի պարզ օբյեկտներ, իրականացնում է պարզագույն գործնական գործողություններ՝ ըստ օրինակի: |
| Երկրորդ | 3 | Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի փոքր մասը, իրականացնում է մտավոր և գործնական պարզ գործողություններ՝ ըստ օրինակի: |
| | 4 | Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի առնվազն կեսը, օրինակ՝ նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները բանավոր կամ գրավոր ձևերով, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներն առանց մեկնաբանության, իրականացնում է մտավոր և գործնական ոչ բարդ գործողություններ՝ ըստ օրինակի: |
| Երրորդ | 5 | Գիտակցված վերարտադրում է ուսումնական նյութի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները, թվարկում է ընդհանուր և տարբերակիչ էական հատկանիշները առանց դրանց բացատրության, իրականացնում է գործնական և մտավոր գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների կամ օրինակի: |
| | 6 | Գիտակցված վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում ըստ օրինակի՝ բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով: |

| | | |
|---|---|---|
| Չորրորդ | 7 | Գիտակցված վերարտադրում է ուսումնական նյութն ամբողջ ծավալով, կիրառում է սովորածը ծանոթ իրավիճակում, նկարագրում և բացատրում է ուսումնասիրվող օբյեկտները, հայտնաբերում և հիմնավորում է առերևույթ կապերը, փորձառությունից օրինակներ է բերում, կատարում է վարժություններ, խնդիրներ և առաջադրանքներ ծանոթ իրավիճակում՝ ցուցումների հիման վրա: |
| | 8 | Տիրապետում է ուսումնական նյութին և կիրառում ծանոթ իրավիճակում, մանրամասն նկարագրում է ուսումնասիրության օբյեկտները, բացահայտում է էությունը, հիմնավորում և ապացուցում՝ փաստերով, եզրակացություններ է անում, ինքնուրույն կատարում է առաջադրանքները: |
| Հինգերորդ | 9 | Լիարժեք տիրապետում է ուսումնական նյութին, կիրառում է մասամբ փոփոխված իրավիճակում: Առաջադրում է վարկածներ, ուսումնական խնդիրների լուծման նոր ճանապարհներ և ապացույցներ, ցուցաբերում է ստեղծագործական մոտեցումներ: |
| | 10 | Լիարժեք կիրառում է ուսումնական նյութը անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ, ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ, ցուցաբերում է ստեղծագործական հմտություններ: |

46. Սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման համար ներկայացված 10 միավորային սանդղակի հիման վրա բոլոր առարկաներում սահմանվում են համապատասխան գնահատման նորմեր:

47. Միավորային գնահատումը կարող է իրականացվել բանավոր հարցման, գրավոր, գործնական (այդ թվում՝ նախագծային) աշխատանքների միջոցով:

48. Նախագծային աշխատանքի համար միևնույն գնահատականը նշանակվում է այն առարկաներից, որոնց միջոցով ապահովվել են նախագծի վերջնարդյունքները: Եթե նախագիծը իրականացվել է սովորողների խմբի կողմից, գնահատականը վերաբերում է խմբի բոլոր անդամներին: Նախագծի իրականացմանը չմասնակցած, կամ իր պարտականությունները չկատարած սովորողը չի գնահատվում:

49. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի գիտելիքների քանակական (միավորային) ընթացիկ գնահատումն ու ամփոփիչ ատեստավորումը իրականացվում է 10 միավորային սանդղակով՝ ըստ իրենց անհատական ուսուցման պլանի:

## VI. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՈՒՄ ԿԱՄ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ, ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄ, ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ԱՎԱՐՏՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՑԱԿԱՅԱԾ ՍՈՎՈՐՈՂԻ՝ ՀԱՋՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ

50. 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններից այլ մարզերի հաստատություններ և այլ մարզերի հաստատություններից Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններ սովորողների տեղափոխությունների ժամանակ՝ գնահատականների համարժեքությունը ապահովելու նպատակով կիրառվում է հետևյալ փոխակերպման սանդղակը.

| Գնահատման նոր կարգի միավոր | Գնահատման գործող կարգի միավոր |
|---|---|
| 1 | 4 |
| 2 | 4 |
| 3 | 5 |
| 4 | 6 |
| 5 | 6 |
| 6 | 7 |
| 7 | 8 |
| 8 | 8 |
| 9 | 9 |
| 10 | 10 |

51. 1-4-րդ դասարաններում սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան՝ բնութագրման միջոցով:

52. 4-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 1-ին աստիճանի ավարտական դասարան) սովորողը փոխադրվում է հաջորդ աստիճան՝ ուսումնական առաջադիմության ամփոփիչ բնութագրի հիման վրա:

53. 5-11-րդ դասարանների սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան՝ անկախ ստացած ամփոփիչ գնահատման միավորներից:

54. 5-11-րդ դասարանների սովորողը՝ ուսումնական առակայի թեմատիկ կամ ամփոփիչ աշխատանքից 1-3 միավոր ստանալու դեպքում ընդգրկվում է այդ առարկայի երկարօրյա խմբում՝ առնվազն 4 միավորին համապատասխան առաջադիմութունը բարձրացնելու նպատակով:

55. Սովորողի կողմից առնվազն 4 միավորին համապատասխան առաջադիմությունը բարձրացնելու անհնարինության դեպքում սահմանված կարգով գնահատվում է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը և սովորողի համար մշակվում է անհատական աջակցության կամ ուսուցման պլան: Սովորողի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից սույն կարգավորումից հրաժավելու դեպքում, մանկավարժական խորհրդի որոշմամբ, տնօրենը դիմում է միասնական սոցիալական ծառայություն:

56. Սովորողի ուսումնական ամփոփիչ գնահատականը ձևավորվում է ուսումնական մոդուլի, կիսամյակի և հանրակրթական հիմնական ծրագրերի աստիճանի ավարտին:

57. Հանրակրթական դպրոցի 1-4 դասարաններում սովորողների տարեկան ամփոփիչ գնահատումը կատարվում է գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների բնութագրման միջոցով: Յուրաքանչյուր սովորողի համար կազմվում է ուսումնական աճի (առաջադիմության) բնութագիր:

58. Պետական ամփոփիչ ատեստավորումն իրականացվում է հանրակրթական հիմնական ծրագրերի աստիճանի ավարտին՝ այդ աստիճանի ուսումնական յուրաքանչյուր առարկայի բոլոր կիսամյակային գնահատականների միջին թվաբանականի, ավարտական քննությունների կամ ստուգարքների կամ բնութագրման արդյունքով: Պետական ամփոփիչ ատեստավորման արդյունքները գրանցվում են ավարտական փաստաթղթում:

59. 9-րդ դասարանը (հանրակրթական հիմնական ծրագրերի 2-րդ աստիճանի ավարտական դասարան) ավարտած սովորողը ստանում է հիմնական կրթության վկայական: Բոլոր ուսումնական առարկաներից ստացած ամփոփիչ (5-9-րդ դասարանների բոլոր կիսամյակային գնահատականների միջին թվաբանական) միավորը և ավարտական բոլոր քննությունների միավորները գրանցվում են սովորողի հիմնական կրթության վկայականում:

60. 12-րդ դասարանը (ուսումնական հաստատության հանրակրթական հիմնական ծրագրերի 3-

րդ աստիճանի ավարտական դասարան) ավարտած սովորողը ստանում է միջնակարգ կրթության ատեստատ: Բոլոր ուսումնական առարկաներից ստացած ամփոփիչ (10-12-րդ դասարանների բոլոր կիսամյակային գնահատականների միջին թվաբանական) միավորը և ավարտական բոլոր քննությունների միավորները գրանցվում են սովորողի միջնակարգ կրթության ատեստատում:

61. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողներին տրվում է հավաստագիր, պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

62.Ուսումնական առարկաներից ամփոփիչ գնահատականներ նշանակում են դասավանդող ուսուցիչները՝ ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում՝ հաշվի առնելով սովորողի կիսամյակային գնահատականները:

63. «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաների պարապմունքներից առողջական վիճակի պատճառով սովորողի ազատված լինելը, ինչպես նաև չդասավանդելու պատճառով որևէ առարկայից տարեկան գնահատական չունենալը չի ազդում նրա՝ հաջորդ դասարան փոխադրվելու կամ Հաստատությունն ավարտելու վրա:

64. 5-8-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում տարեկան 9-10, 9-րդ և 12-րդ դասարաններում տարեկան 9-10, ավարտական, պետական ավարտական քննություններից 9-10 կամ 18-20 միավոր գնահատված սովորողները պարգևատրվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գովասանագրով:

65. 8-րդ և 9-րդ դասարանների ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաներից տարեկան 9-10 և քննական 18-20 միավոր գնահատված սովորողը ստանում է «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական: Որևէ առարկայից չգնահատված հիմնական դպրոցի սովորողը «Գերազանցության» նշումով հիմնական կրթության վկայական չի ստանում՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

1) առողջության պատճառով «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն» առարկաներից ազատված լինելը.

2) միջազգային պայմանագրի համաձայն՝ ուսումնառության ընթացքում մեկ անգամ, մեկ տարի արտերկրում ուսում ստացած և ՀՀ վերադարձած սովորողի կողմից առանձին առարկաներ չուսումնասիրելը.

3) դպրոցում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով որևէ առարկա չուսումնասիրելը: